Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 10 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորման 2–րդ փուլ» ծրագիր.

Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագիր.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան, Տավուշ և Բերդ համայնքներում խաղահրապարակների տեղադրում», «Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի մի շարք համայնքների դպրոցներին», «Բժշկական պարագաների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում»,և «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վարդենուտ համայնքի միջնակարգ դպրոցին» ծրագրերը.

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2013 թվականի ընթացքում իրականացվող «Օրրան-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիր.

«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2013 թվականի ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» և «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում) բարեգործական ծրագիր.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: